



ԱՐԺՈՒՒ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹԻՌԻՅԵԱՆ ՀԱՅՐԵՆԱՔԵՐ ԹԵՒՕՐ
ՅԱՐԺՈՒՆԻ ՄԵՆԱՍՅԱՆԻՆ ՎԱՐԱԳԱՅ

ԻՄՔԱԳՐ ՀԱՅՐԵՆԱՔԻՕՍ
ՄԳՐՅԻՉ ՎԱՐՄԱՊԵՏ ԽԻՄՆԱՆ

1864 թ. 5

ՀԱՏՈՐ ՉՈՐԱՐԵՒ
ՎԱՆՏՈՍՅ

ՌՅԺ.

ԻՏՊԱՐԱՆԻ, ՎԱՐՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՐԱՆ
Ի ՎԱՐԱԳ



THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
AND
ZOOLOGY
OF THE
CITY OF LONDON

THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
AND
ZOOLOGY
OF THE
CITY OF LONDON

THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
AND
ZOOLOGY
OF THE
CITY OF LONDON

THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
AND
ZOOLOGY
OF THE
CITY OF LONDON



ԵՐԾՈՒՒ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՀԱՏՈՐ Դ .

1861

ԹԻՒ 5

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ :

ՀԱՅԱՍՏԱՆՑ նախնի իշխանական դարերուն մէջ
 թէ որչափ բարձրագուռն տաեան կ'ըտցուէին ամբողջ Հայ-
 տաանի ժողովուրդը կառավարելու համար, այդ կ'իշխէն
 մեզ ազգային պատմիչներու Արձանադրութիւնք : Ընդ հա-
 նուր Հայրապետի համադրումս տաեան, չորեքհարիւր
 վիճակաւոր Եպիսկոպոսաց թեմական տաեանք, թաղաւո-
 րական տաեան, կուսակալութեանց տաեանք, եւ Նախարա-

րութեանց ատեան . այսչափ ատեաններու բարձր դռները
փակեց , արդեօք իրաւանց անգղուշութիւնը , եթէ տնաւ
ու դռնափակ երկպառակութիւնը : Այժմ մնացորդ չ
միջին հայ ժողովրդոց համար նախախնամութիւնը երկու
մեծ ատեան պահեց . Արարատեան մայր աթոռին մէջ
հաստատուած Սիւնհոգոսի ատեանը . որոյ նախագահ
հանդիսանայ ընդ հանուր Հայրապետ Հայոց . Առստան
նուպօրոյ ազգային ատեանը . որուն նախագահ կ'եստի ժա
մանակին Պատրիարքը :

Ահա այս երկու մեծագոյն ատեանքն են ընդ հանու
Հայաստանի վարչութեան կառքին անուոյն առանցքը . զի
թեթեւ ամբողջ Հայոց յառաջադիմութեան յոյսին եւ ան
ւոյն շրջանակը այս երկու մեծ առանցքին վերայ կ'դա
նայ : Եթէ խորտակին Քրիստոնէոյ այս առանցքները
յայտնի է վարչութեան կառավարն ալ կառքն ալ ուրիշ
մէն սխալման հանգամանքներով շուարած կ'դադրին ճա
նապարհի ընթացքէն :

Մեր այդ վերնագիրը Էջմիածնայ սիւնհոգոսի ատեան
համար չէ . վասն զի նորա վարչութեան անուոյն առան
քը թէ կոտորեւ է թէ ողջ է . Ճշմարտութեան կամ ուրիշ
օրինաց ճանապարհի գծին վերայ շիտակ կրն՞անայ եթ
ծուռ . այս մասին ընդ աչս չի դատելով՝ աւելի ստոյգ կ'
առանց անաչառութեան գրել՝ Ռուսաստանի հայ լրագր
պարտքն է : Դրացի ու մերձակայ աչքերը աւելի սուր
նկատեն քան թէ մեզի պէս ճանապարհորդի մի համա
տեսութեան շուտափոյթ անցքը : Միայն այսչափ կ'
եմք խօսել թէ Մայր աթոռի Սիւնհոգոսի ատեանը աւել
հոգեւորական է քան թէ քաղաքական կամ ազգային .
իւր վարչութեան անիւը կ'դառնայ միայն բարձրագոյն կ'

գաղթութեան առանցքին վերայ . զորոյ բովանդակութիւնը հրատարակեր է Մասեայ Աղաւնին աշխարհաբառ լեզուով : Այս ատենին օրէնքները կիշխեն Ռուսաստանի մասին մէջ եղած գրեթէ հինգ հարիւր հազար հայ բնակիչներուն վերայ :

Սոյն համառօտութենէն ուշիմ ընթերցողը՝ կարող է ինքնին մտկայարեւել, որ Էջմիածնայ Անթիմը նոյն ընդարձակ իւրաւունքներ չունի ամէն ազգային զատատանական վէճերը վճռելու կամ կտրելու, ինչպէս Աստանդուպօլսոյ Պատրիարքարանի ազգային ատեանը : Ուրի մեր այդ բնաբանին իմաստը միայն Պօլսոյ ազգային ատենին վերայ դարձնելով՝ սկսել Խօսիլ :

Տաճկաստանի բոլոր Հայկազանց ծանօթ է , որ Պօլսոյ Պատրիարքարանին ատեանը երկու մասն բաժանուած է . կրօնական կամ եկեղեցական ատեանը . որուն անդամները սրբազան գրոց հմուտ կրօնագէտ եկեղեցականներէն կը բաղկանան . իսկ միւս ատեանը ժողովրդական կամ քաղաքական ատեան կ'ըլլուի . որոյ անդամներ կ'ըլլան ան Պօլսոյ եւ գաւառական ազգայնոց ընտիր մասերէն . այսինքն քաղաքական օրէնքներուն տեղեակ բարի համբաւ ու համարում ունեցող պատուաւոր մարդիկներէն : Սոյն երկու ատենին եւս միանգամայն նախագահ կ'հանդիսանայ Ժամանակին Պատրիարքը : Ահա բոլոր Տաճկաստանի Հայոց ազգային վարչութեան զործքերը սոյս երկու ատեաններէն կախում ունին շատ պարագաներու մէջը եւ նորա կարեւոր վճիռներուն կամ իշխանական հրամանին վերայ կը դառնան ինչպէս կառքի մի անիւները իրենց առանցքին վերայ : Հայոց Պատրիարքարանի ատեանը ազատութեան մեծ իրաւունքներ ունի . զոր Օսմանեան Բարձրագոյն դու-

առիւթը չորս հարիւր տարի յառաջ Յովակիմ առաջին Պատ-
րիարքին օրէն շնորհելու է իւր իշխանութեան տակ եղած
հպատակ Հայերուն . թէպէտ եւ դառն ժամանակի միջոց-
ները Հայոց ազատութեան իրաւունքները շատ անդամ
գործադրութեան ուժէն տկարացել են . երբեմն եւս ազ-
գային մեծամեծ գործքերը յառաջացուցել են : Միայն
թէ այդ նախնի ատեանը ազգի մէջը գտնուած հարուստ
եւ իշխանաւոր անձինքներէն կ'կազմուէր . ճարտարամիտ
արհեստաւոր կամ խելօք աղքատը մասն չունէր նոյն ա-
տենին իբրեւ արժանաւոր անդամ ընտրուելու :

Բայց ներկայ դարուս մէջ աւելի բազմապատկեցաւ
այդ իրաւանց շնորհքը , մինչդեռ Եւրոպիոյ քաղաքական
հրահանգները ողջունեցին զՏաճկաստան , որով Պատրիարքա-
րանի ազգային ատեանը առջի ժամանակներէն աւելի
փոքր իշատէ իւր վարչութեան ընթացքը կանոնաւորեց :
Այս ատենին վարչութեան կառքին անուոյն շրջանակը խիստ
մեծ է եւ իւր բոլորակութեան շառաւիղները կ'տարածին
մինչեւ Տաճկաստանի սահմանածայր եզերքները եւ գրեթէ
երեք միլիոն Հայոց ազգային գործքերը այդ միշեալ վար-
չութեան անուոյն վերայ կ'դառնան :

Ահա սոյն Ազգային կեդրոնական կառավարութեան վերայ
պիտի խօսիմք այս անգամը . եւ թէ ինչ պէս ջախջախուելուն
վիճակին հասաւ այս վարչութեան կառք ողջ անկունե-
րով մէկ տեղը , իւր գլխողութեան չափ հրատարակել Արմ.
ուոյն պարոքն է :

Հարցնւր այժմ , հետաքրքիր ընթերցող , թէ ինչ
համար պիտի ջախջախուէր վարչութեան կառքը . կամ
մինչդեռ ինքն իւր շարունակ ընթացքը սկսել էր նոր ժ-
նուած ուղղադիմ ճանապարհի մի վերայ եւ յաջողու-

Թեամբ յառաջ կերթար, ո՞ր ապառաժներու, զարնուելով խորտակուելու վիճակին հասաւ. արդեօք վրան նստող կառավարչին անզգուշութիւն էր ասոր պատճառ. եթէ լըծուած ամեհի ձիերու անզուսպ արշաւանքը. արդեօք այդ վտրշուծեան կառքին շէնքը հաստապինդ կապակցութեամբ ամրացած չէի՞ն մասունքներ, որ չղիմացաւ. եթէ առանց մեծամեծ ապառաժներ հորդելու՝ տարաժամ անհամբերութեամբ կառքը ճանապարհին վերայ հանին :

Այս հանճարաւոր հարցմունքներուդ պատասխանը, ազգային լրագրաց խմբագիրները բաւական օրինաւոր ու ճշգրիտ լուծումները տուած են, ըստ մեծի մասին ամենուն կարծիքները համաձայն են թէ եւ ոմանց ալ անհամաձայն : Զարմանք չէ. փասն զի մարդկային բանադատութիւնը իւր կրից ու կամքին պահանջման համեմատ կարող է փաստ ու ապացոյց ճարել բաղմունքեան միտքը համոզելու. բայց ուղիղ եւ լուսաւոր բանադատութիւն այն է միայն, որ Աստուծոյ օրինաց համաձայն է եւ մարդկային իրաւանց պայմանները կ'պահէ, իւր խղճին ու մտաց ուղիղ դատաստանի ԿՃԷՆ երբեք չի խոտորի. այնպիսին է ահա, որ Բրիտտոսի անսուտ պատուէրին միտ դնելով՝ ընդ աչս վեր ի վերոյ դատաստան ընելու չի համարձակեր. հապա դատաստանը շիտակ տեսնալու համար իւր մտաց եւ արդար խղճին աչքով կ'հայն : Սակայն մտաց աչքին ալ լուսաւորութիւն պէտք է. փասն զի ի՞նչ ճշմարիտ դատաստան կարող ես պահանջել մինչդեռ մտքին ու խղճին դատաւորը կամ կոյր տղիտութեամբ կ'խարխալի եւ կամ կրից միգախառն ամպերով պատած կորոտայ եւ կարկուտներ կ'թափէ. կը յուսմս արդեօք, մտաց արեւուն դատաստանի շառաւիղները կարող են պայծառ շողողել, ցորչալի իւր դէմքը պատեր է

կրից Թանձր մառախուղը : Այս կիրքերու նշոված անունն
 ներք գիտնա, ազնիւ ընթերցող, Թուեմ քնդի համար . կիրք
 հպարտութեան, կիրք նախանձու, կիրք ազահուութեան եւ
 շահասիրութեան , կիրք խորամանկութեան եւ խաբէութե,
 կիրք կեղծաւոր շողօքորթ մարդահաճութեան , կիրք փա-
 սասիրութեան եւ անիրաւ պատուասիրութեան, մանաւանդ
 ամենէն փառ, կիրք երկպառակութեան . եւ ասոնցմէ ծնած
 անիծից զաւակներուն եւ Թռռներուն անունները որ մէկ
 Թուեմ քեզ . Այսպիսի կիրքերով զառածեալ մտաց դա-
 տաւորին աչքը շիլէ . ծուռ եւ Թիւր կ'տեսնայ ինչ որ տես-
 նայ . Քրիստոսին բժշկած կիսաբաց կոյրին պէս կ'կարծէ թէ
 ծառերը մարդիկներու նման շուրջ կուգան :

Այս կիրքերն են ահա մեր ազգային կեդրոնական վար-
 չութեան կառքին անիւները խորտակող . այս կիրքերն են
 ճանապարհին վերայ տնկուած մեծամեծ ապառաժները .
 որոնք վարչութեան կառքին ընթացքն արգելելով Թող չեն
 խտար յաջողութեամբ հասնել դէպ ի յառաջադիմութեան
 նպատակն : Այս կիրքերն են որ բաւական ժամանակէ ի վեր
 ազգին խաղաղութիւնն վրդովող խռովութեան հակառա-
 կահողմքամիները փչելով ազգային կառավարութեան նաւը
 ժայռերու զտրնելով կտոր կտոր արին . միութեան հոգւով
 բեւեռուած տախտակները իրարմէ բեկբեկելով ճհ, ահա
 կը տատանին Վասփորի ծովուն ալիքներուն վերայ . նաւա-
 պեան եւ նաւաստիներն առ հասարակ տարակուսած ալը-
 շած կեցեբեն . նաւահանգիստ նաւահանգիստ , խաղաղու-
 թիւն խաղաղութիւն, կ'կանչեն :

Այժմ սկսեմք բացատրել այդչափ զանազան կրից սպա-
 սաժներուն զօրութիւնը . Թէ ինչպէս ազգային վարչու-
 թեան կառքը կէս ճանապարհին վերայ դադրեցուցեր են

Թու թեան կիրքերու ապառաժներն ալ վարչութեան կառ-
քին զէմը բիչ վտանգ չի բերին, երբ տեսան ազգային ազ-
քատ սեղանին բոլորաբը արթուն պատաստները պիտի
կենան . ալ այնուհետեւ հացկատակ մարդահաճային կամ
կեղծաւոր շողօքորթին նոյն սեղանի հացէն բաժին չեղներ .
խորհչցան ու մոտածիցին կուսակցութեան հոգի մի յա-
լուցանել . ուստի ադուէսաբարոյութեան ամէն գուհաւոր
ու փափուկ ձեւեր ձեւացան . անհիմն ու կարկառուն հա-
մադանքները թափեցին իրենց շողմաշարժ լեզուէն . մինչեւ
կարծել տուին պարզ ու դիւրահաւան ականջներուն, թէ
Վարչութեան նոր Սահմանադրութիւնը՝ Հայաստանեայց
եկեղեցւոյ օրինաց հիմունքներուն խախտիչ գաղտնի մե-
քենայ մի է : Այսպէս , փառասիրութեան կամ անիրաւ
որսողատիրութեան միւս կիրքերն ալ իրենց ազդեցու-
թիւնները գործի դնելով՝ ահագին ապառաժներուն պէս
շարուեցան ետեւէ ետեւ ձանապարհին վերայ , ուր որ
Վարչութեան կառքը իւր ընթացքը պիտի շարունակէր :
Ընչդեռ անկասկած սուր արշաւանքով մը Վարչութեան
կառքը ձանապարհ ելաւ , եւ ահա ի՛նչ , Երեքովի գարանա-
մուտ աւազակները այսինքն այդ վերայիշեալ կրից ապա-
ռաժներուն խումբը վրան հասան . հարին ու վիրաւորեցին .
այժմ ձանապարհին վրայ կիսամահ ընկած գորովասիրտ Սա-
մարացու մը այցելութեան կ'կարօտի :

Բայց դուք յոյս առէք , վարչութեան վիրաւորեալ Լն-
դամները , այդ ձանապարհը՝ որ ընկած ես , ամայի չէ . այլ
արքունական պողոտայ մի է ազատ դարուս մէջը , շատուոր
են Բիւզանդացի ուղեւոր ազգասէրները . որոնք այսուհե-
տեւ այդ ձանապարհով պիտի անցնին միշտ ու դառնան :
Ի՞նչ աչք է , որ այդ քու վէրքերդ տեսնալով՝ քեզ չի դը-

ծանրներուն ձայն , գրեթէ ամբողջ Հայկազանց աչքէն արցունքը թափել տուաւ :

Բայց դիտեա՛ն ո՛վ տարապարտ խաչեալ Սահմանադրական վարչութիւն , այն պաշտպան Տէրն , որ իւր Յիսուս որդւոյն վերքերը սրբեց , նոյն պիտի սրբէ ու մխիթարէ զքեզ հրաշանորդ յարութեամբ : Այդ քո այժմեան վերքերուդ՝ կակուղ ձէթ եւ պատան պէտք են . այսինքն սէր , անքակ միաբանական հոգի , խաղաղութիւն , հաշտութիւն եւ վերջապէս երկայնամիտ համբերութիւնը : Այս առաքիւնութիւններն են , որ քու վարչութեան կառքը ապահովութեամբ կարող են անցուցանել ահագին կրօնց ապառաժներէն եւ առանց մեծամեծ փորձանքներու հասցունել աղբային յառաջագիմութեան իջեւանին հանգիստը : Ասացի առանց մեծամեծ փորձանքներու . վասն զի կարելի չէ փոքր փորձանքներէն խոյս տալ . նա եւ շատ անգամ՝ մեծամեծներէն եւս : Ի՞նչ կ'կարծես , ո՛վ նորածին վարչութիւն , առանց վրանդի , առանց փորձանաց , առանց արտաքին եւ ընտանի թշնամեաց , առանց կռւոյ ասպարիսի՝ աղբային բարեկարգութեան մրցանակն առնելու կ'յուսաս , մի յուսար : Ի՞նչ ազգ . կամ թաքաւորութիւն կայ աշխարհիս վերայ , որն որ առանց աղբային յեղափոխութեան , առանց անձնանուէր նահատակութեան կամ ճգնանց , յառաջագիմութեան մրցանակն դիւրութեամբ ստացած է : Իբրեւ մարդը՝ բնութեան կարգով ընթացիլ , իբրեւ քրիստոնեայ՝ Յիսուսի օրինակէն համբերութեան եւ յաղթութեան եղանակը սովոր . առանց մատնութեան , առանց կապուելոյ , առանց անմեղութեամբ դատաւիեալ լինելոյ , առանց մահապարտութեան վճռոյ , առանց Գողգոթայի խաչին , առանց իբր մեռեալ կարծուած գերեզման իջնալու . (ինչ-

տրվին որ շատ անգամ չարին հակառակելով՝ չի յաղթուիր .
բան թէ խոյս տալով . այսինքն կամ զիջանել՝ ներելի եղա-
ծին չափ թեթեւ իրաւունքները զոհելով՝ կամ մեծահոգի
համբերութեամբ : Իմաստուն մարդկանց նախատեսութիւ-
նը պէտք է քեզի համար դուշակէ . որ այդ խանձարու-
քին մէջ կրած վիշտը իբրեւ առաջին փորձ կամ նախաու-
նակ համարեա եւ պատրաստուիս գօտէպինդ արիութեամբ
բազմադիմի վշտաց ու խաչի հանդէսներու մէջը խալառ
համբերելու : Այսպէս է աշխարհին կարգը եւ մարդկային
ազգի անկայուն վիճակը : Եւրոպիոյ նախանձելի ազգերէն
ո՞րն արդեօք առանց մեծամեծ դժուարութեանց կամ խը-
ռովալի յեղափոխութեանց իւր ազգային վարչութեան
կառքը դիւրութեամբ վազէ վազ հասուց յառաջագիմու-
թեան նպատակին . ոչ ապաքէն հազար անգամ ինկաւ ու
կայնեցաւ , հազար անգամ իւր երկաթապինդ ոտուրները
խոչերու զարնելով դունդագունդ արիւնները հոսեց . բայց
վերջապէս հասաւ եւ մինչդեռ հասած կ'կարծէր՝ զինքն
եւ խաղաղութիւն կ'համբուրէր՝ Վարիզը սալայառակները
քակելով պատնէշներ շինեց եւ այնչափ արիւնները թա-
փեց մինչեւ Քաղղիոյ գահ ներկուեցաւ :

Ուրեմն ուսիր , սիրտ առ , այդ նորածին մանկութեանդ
մէջը դաստիարակէ զքեզ , որպէսզի հանդերձեալ խաչի
վշտակրութեան կարենաս արիապէս դիմանալ : Աւետարա-
նի խօսած իմաստուն մարդոյն հանճարը գործածէ . միու-
թեան , համբերութեան , եւ մանաւանդ ազգային իրաւանց
ճշմարտութեան . կարծր եւ անխորտակելի վէմերուն վերայ
շինէ ու բարձրացուր այդ նոր Սահմանադրութեան շինո-
ւածը . ալ այնուհետեւ մի վախճար կամ կասկածիր . հակա-
ռակորդաց հեղեղները ու քամիները թող փչեն ու զարնեն

պիտանութիւն կունենայ հայրենեաց շինութեան : գութ , որ այժմ ձեր հայրենի աւերակները կրկին շինելու կ'ընդնիք Սահմանադրական ճարտարագետութեամբ , ձեր ծիցն ալ չափն ալ , դովի լի է . բայց զգոյշ եղիք ընտրութեան հոգով՝ հրէական ատելութեամբ չմերժէք այն ընտիր վէմերը , որոնք մեր հայրենեաց յառաջադիմութեան շէնքին անկիւնաքար լինելոյ արժանաւոր են :

Անյոյս վհատութեամբ մի կարծեր թէ , նոքա Պետրոսի պէս ուրանալով սասանեցան . միտ բեր դարձն ու դառնալ պէս լսցին : Թող տուէք , թող այդ սիրտերն ալ Աստուծոյ շինէ : Իբրեւ ճշմարիտ քրիստոնեայ առանց Զրիստոսի ոչ մի բան կարող ես գլուխ տանել . վասն զի այդ քո մեծ ժւրաջան աշխատութիւնը , նուիրական առաքելութիւն մի է : Իսկ իբրեւ տկար , սորուկ եւ աղքատ , կշռէ ու ժխդ չափեւ այնպէս շարժիր . գուցէ սրածուրջ Արծիւ կարծելով դքեղ իբրեւ անգոր ձնձղուկ , մինակ մնաս հայրենի աւերակաց գետնահաւասար տանիքներու վերայ . ու Դաւիթին պէս միշտ ողբաս քու միայնութիւնը : Մինչդեռ այդ ուղիղ ճարտարագետական լար ձեռքդ առնելով հայրենի փրած տան իբրեւ շինող կ'հանդիսանաս , Տիրոջ գործակցութիւն քեզի օժանդակ առ . որպէս զի զուր եւ նանիր չը լինի այդ տաժանելի վաստակը : Շինեցէք ուրեմն , Տէր , Սէր եւ Դուք , եկեղեցական , ժողովուրդ , ամիրայ , իշխան արհեստաւոր , ուսումնական , ռամիկ , ամէն հասակի եւ աստիճանի մարդիկները առ հասարակ . վասն զի եթէ Սահմանադրութեան երկունքով կ'երկնէք ազգային յառաջադիմութեան բարիքը ծնանելու , ուրեմն հարկաւոր է միութիւն . վասն զի անմխարանութիւն ամուլ է չի ծնաներ եւ թէ ծնանի պատահմամբ , իւր ծնունդը չար եւ վիժած է :

Հապա միաբանեցէք իբրեւ հայ համազգի եղբարք .
 իբրեւ միոյ հօր եւ մօր զաւակները . մանաւանդ իբրեւ
 Ուեռտարանին խաղաղութեան աշակերտք : Կարելի է , այո՛ ,
 ի՞նչպէս . Պօղոսի աստուածախօս խրատուն սիրաբար ականջ
 դնելով , աշխարհ միմեանց , շնորհել իրերացոյն . եւ ահա ի՞նչ ,
 խաղաղութիւն , որով միութիւն , որով շինութիւն հայրենե-
 անց . որոյ վասն ի խորոց որո՞ւ է կ բարեմաղթէ Վասպուրա-
 կան Արծուին :

**ՁՈՂԲ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԴԱՐՁՈՒՅԵԱԼ
 Ի ՀԱՅԱՍՏԱՆ ՆԱՏԵԱԼ ՈՂԲԱՆՈՒԻՐ ԼԱՅ ՎԱՍՊՈՒՐԱ-
 ԿԱՆ ԱՐԾՈՒԻՆ**

ՁԻԱՐԴ նուազեցաւ լուսաէջն Այրարատ մայրն հա-
 նուր Հայաստանի , որամտութեամբ Տեառն խեթիւ հայեցաւ
 արեգակն ի բարձանց . ընկէց յերկնից յերկիր զփառան Ա-
 րամեան ազգին եւ ոչ յիշեաց զպատուանդան ոտից իւ-
 րոց . ուր էջն երբեմն նոյն ինքն Աստուածորդին Յիսուս ,
 դողացան դրունք սանդարամետին . ինքն իսկ եդ զհիմն Հայ-
 աստանեայց եկեղեցւոյն , սուրբն Գրիգոր ի վերայ նոյնոյ հի-
 ման շինեաց եւ աւարտեաց :

Որպիսեօք զգեղ սիրեցելոյն Յակոբայ . իբրու զտերեւ
 սշնանի կամ զերթ ծաղիկ խորշակահար ի վայր թօթա-
 վեաց եւ ոչ անխտայեաց , զընտիր ընտիր ամուրս Հայկազանց
 յերկիր կործանեաց . զիշխանս , զթագաւորս եւ զգորաւորս
 առ հասարակ անարգեաց , ջնջեաց եւ եբարձ ի միջոյ :

Փշրեաց Տէր յաւուր սրամտութեան իւրոյ զանխորտակելի եղջիւրս Հայկազանց. որ անդիմադրելի խեթկիչ զօրութեամբ իւրով զթշնամիս դողացուցանէր եւ վարէր ի վտարտա մինչեւ ի Սասպիական, Միջերկրական եւ Սեաւ ծովուն յեզերս. յորս սահման չսփեալ տնկէր զնիզակ հզօրն Արշակ. եւ որ այսպիսի յաղթական յառաջադիմութեամբ յառաջ ելածար. ո՛հ, դարձոյց յետո Տէր զառաջ նորա առաջի թշնամեաց նորա. հուր պատեաց զՀայաստան, հաշեաց եւ մաշեաց զամենայն գեղեցկութիւն վայելչուն նորա :

Նին Տէր իբրեւ թշնամի վարեցաւ ընդ սրեցելոյ այգւոյն Այրարատայ. քակեաց եւ աւերեաց զանմառելի ցանկս նորին. մեւտ գտին ոտք թշնամեաց, կթեցին խառ եւ առածուր կոխեալ ճմլեցին զքաջաբերութիւնս որթոցն ոտք թշնամեաց ներկեցան արեամբ որդւոցն Հայկազանց. բազմացան, այո՛ եւ դստերացն Հայկայ տառապանք ի վերայ տառապանաց :

Մի թէ մերթեայ Տէր զսեղան իւր, կամ ի բաճ ընկեց զսրբութիւն նորին. սեղան Նոյի ի Մասիս, ուր ուխտ յաւիտենական հաշտութեան, սեղան Գրիգորի ի Սաթուղիկէ եկեղեցին. յորում անմահ Գառնին գեղման յիշատակ. ոչ միայն ի յերկրի, այլ եւ ի բուն յերկնս ի ներքին կողմն վարագուրին հանապազ նուիրեալ կայ յանդիման աչացն Հօր : Ի վերայ այսր ամենայնի բարկացաւ եւ ոչ հաշտեցաւ ընդ տառապելոյն Հայաստանի :

Իջին հարթ եղեն զեռնոյ բարձրութիւնք վտռաց Հայկազանց. ի գահէն եւ թագէն ի տարկութիւն, յաղստ իշխա-

նութենէն ի ծառայութիւն , յանկարտ ճիսութենէն ի
թշուառ արքատութիւն : Ազդարդոյ առատասեղան , դը-
րունք իւր բաց էին ի բաշխել զառւրս . որդիքն իւր նը-
ման նորատունկ ձիթենեաց շուրջ գտնանով բոլորեալ կըշ-
տագինդ վայելէին զբարութիւնս . ոհ , այժմիկ առ քաղցի
եւ ծարաւոյ , պանդուխտ աշխարհաշրջիկ դեգերին մուր-
ղաբար առ գուրս լիոյն :

Պակասեցին աչքք ի հանապազօրեայ արատաւաց , յու-
շտանդ Երեմիաս , ի վերայ բեկման ժողովրդեան .
միթէ պակաս քան զքեզ ողբացին Երեմիաք Հայաստա-
նի ի վերայ հայրենեաց եւ ազգին , մինչեւ նուաղեցան աչք
նոցին ի լուսոյ . աչք Ներսիս , աչք Իսահակայ , աչք Մես-
րովայ եւ Մովսիս , աչք Եղիշէի եւ Ղազարու . եւ աչք
իսկ աւասիկ Վասպուրական Արծուոյն :

Չմնչ վկայութիւն վրայեցից բեղ , կամ զմնչ նմանու-
թիւն նմանեցուցից բեղ , ողորմելի . Հայաստան , առաւել
քան զԵրուսաղէմին դառնացաւ ծանրացաւ բաժակ բեկման
քո . իսկ ո՞ր իցէ , որ յառուրս վերջին թշուառութեք մխրթար
լիցի անկարեկից սգացելոյդ . կամ բժիշկ բազմադիմի ցաւոյդ :

Չդոյր ի բեղ , Հայաստան , Մարգարէ , որ տեսնէր վասն
քո տեսիլս զուր եւ տարապարտուց կամ պատմէր բեղ առ-
եղծուածս անտի . այլ մարդարեւ քո սքանչելիք էին ճշշ-
մարտապատում եւ անաչառ . Ներսէս , Իսահակ եւ Մովսէս ,
որք յայտնեցին յանդիմանութեամբ եւ ոչ ծածկեցին զա-
նիրաւութիւնս քոյն . զի դարձ լիցի բեղ յապագայ գե-
րութենէն . այլ դու խտտասրտութեամբ խուլ եղեր առ
յայանի գուշակութիւնսն . արդ կատարեցան այն ամենայն

ի վերայ քո, յուշ ած, աւաթիկ այնպէս կորացար, կործանեցար ի վերջոյ եւ չկարես անգամ իսեղաջէդ փոքր ինչ խլրտիլ ի կանգնումն վերստին փառացդ :

Ճափ զծափի հարին ամենայն անցաւորք ճանապարհի ի վերայ գլորման եւ թշուառութեան քոյին. շշշէին եւ շարժէին զգլուխս իւրեանց ի վերայ ապաժոյժ աւերակացդ : Մար, Պարսիկ, Թաթար, Հաղարացիք եւ Յոյն այս անորա բռնիքն է ասէին. Վաղարշապատ, Արտաշատ եւ Անին. պսակք վայելչութեան փառաց նազելոյն Հայաստանի՝ նա եւ համօրէն աշխարհի :

Արար Տէր, զոր խօսեցաւ. չեթող ինչ պակաս յաշխարհ աւեր հարուածոց զոր չէած ի վերայ քո, առաւել քան զամենայն ցաւ անհնարին. ուրախ արար ի վերայ քո զթըն նամիս քո եւ բարձրացոյց յոյժ զեղջիւր յաղթանակի քաջութեան նեղչաց քոց. որք բացին զբերանս իւրեանց եւ ասէին. եկայք կլցուք կենդանւոյն զհսկայն Հայաստան. զի այս այն է, որունմ ակն ունէսք. ահաւաթիկ տեսաք, գլխաւք եւ հաստք մեք նմա :

Գոչեսցեն հեծեծանօք սիրտք Հայկազն հայրենասիրաց. թող ի գաղթական վայրաց դան ժողովին առ պարսպօք կործանեցելոյն Անու, ընդ վազածամ կորուստ բախդ ին Բագրատունեան հեղեղաբար հոսեսցեն՝ զարտատուս : Թռիր, գլխաւ, նիստ ողբանուէր ընդ նոսին, Արծու իդ Վասպուրական, մի լռեր, մի դադարիր եւ մի տար դուլ երբեք ականողիդ յարտատուաց առ ի լալ միշտ զմահ փառաց սիրեցելոյն քո Հայաստանի :


Արի եւ մի յապաղիր, եկ ի խոստովանութիւն ի դիշերի,
 ի սկիզբն ի գլուխ պահոց քոց. յառաջին ապառաժ խառա-
 պտութեանէն փափկացո եւ հեղ իբրեւ զջուր սիրտ քո ա-
 ռաջի Տեառն. Թափեա ի ձեռաց քոց զարիւն անիրաւու-
 թեան. համարձակ արդարութեամբ տարածեա զբազուկս
 քո առ Բարձրեալն. իցէ՛ զի ներեցէ եւ դարձեալ վերբե-
 րեցէ զքեզ ի նոյն բարձրութիւն վառաց :

Տէս, Տէր, եւ հայեաց ընդ վերջին Հայաստան, ո՞ւմ եւ
 որո՞ւմ աշխարհի հատուցեր զվրէժ սրտմտութեան քոյին .
 միթէ ոչ կիրին եւ կանայք Հայկազունք զպտուղսորովայնի
 իւրեանց . միթէ ոչ Թալկացեալ լուծան ի սովոյ որդիք մե-
 ծատան Հայկայ . միթէ ոչ իբրեւ զգառն ի զենու մն վա-
 րեցան պաշտօնեայք Հայաստանեայց եկեղեցւոյն . ընդ նո-
 սին առ հասարակ ծերն եւ տղայն, կուսանն եւ երիտա-
 սարդն վարեցան գերութեամբ յօտարութիւն. իսկ զմիա,
 ցորդս ի սուր արկեր, կոտորիցեր յաւուր բարկութեան քո .
 ի սպանդարանոցի հայրենեաց ետուր զենուլ իբրեւ զանա-
 սուն, խոհակերեցեր եւ ոչ անխայեցեր :

Այսպէս, Հայաստան, եհան Տէր զվրէժն իւր ի քէն .
 այսպէս, ո՞վ Աստուած, եօթնապատիկ հատուցեր զփոխա-
 լէնն ի վերայ ամենայն անօրէնութեանցն մերոց : Բաւ եւ
 հերիք եղեւ . Տէր, ամփոփեա զձեռն արդար վրէժինդ-
 րութեան քոյին : Լսելի արա մեզ զնոյն ձայն աւեաաւոր՝
 որ երբեմն առ Յակովբեան ազգն : « Մխիթարեցէք մը-
 խիթարեցէք զժողովուրդ իմ, պաշտօնեայք Հայաստանեայց
 եկեղեցւոյ, խօսեցարուք առ աշենայն սիրտ Հայկազանց .
 լիլի եղեւ սառապանօք . Թողեալ լիցին դմա մեղք իւր

եւ այլ ոչ եւս յիշեցից , զի ընկալաւ ի ձեռանէ Տեառն
կրկին զհատուցումն մեղաց իւրոց » : Այ՛, Տէր, ընկա-
լաւ Հայաստան եօթնապատիկ առաւելութեամբ քան
զերուսաղէմ . եւ արդ ի նեղութեան իւրում յիշէ զքեզ,
Տէր , յահ եւ երկիւղ քո յղացեալ երկնէ աւառիկ . տուր
Տէր, եւ լեր դայեակ մեծ խնամակալութեամբդ աղախնւոյն
քո Հայաստանի ծնանել վերստին զհոգի փրկութեան :

ՋՈՂՔ ԱՆՄԻՒԹԱՐ ՍԳԱՅԵԼԱՅՆ ՀԱՅԱՍ-
ՏԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԻ, ԱՐԾՈՒՒՄ :



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ
ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ

« Այլ մի իջանէր յերես-
դէմէ յերէջով , եւ անկա-
յէնս աւազակաց եւ այլն » :

||¹|| Հայկազանց աւուղջներ, ելէք երթանք այն բազմա-
ժամանակեայ վիրաւորեալ հիւանդին այցելութեան , որ
աւազակներուն մատնուեր է : Բայց սակայն մի հարցա-
նէք թէ ո՞ր է այն գժբաղդ անձն . վասն զի արդէն ի վա-
ղուց Հայոց ողբասաց լեռներն նորա ոշորմաբար սրտա-
ռուչ հեծեծանքներէն արձագանք կհանեն անդադար Հայ
ճանապարհորդաց ականջներուն , եթէ զի՛ կայք այդպէս
սաղուշ թմրութեամբ անհոգութեան բուռն մէջ . հապա
ղարթիք ու վեր կացէք այդ անգութ եւ մահաբեր անհո-

գութենէն : Այո՛ , անդութ , որ զձեզ արեր է . բնաւ ան-
փոյթ . որ անկեալ թշուառ Հայաստանի մօր համար ձեր
որդիական խնամքը կ'զլանաք : Նա որ մինչդեռ յաջո-
ղութեամբ աղատաբար կ'ճանապարհորդէր , ո՛հ , դարանա-
մուտ աւազակներէ չարաչար վիրաւորելով , անկեալ կ'դնի
այժմ հայրենեաց Երիբովի անխառնակ աւերակաց մէջը
բազմադար ժամանակաւ , եւ իւր բոլոր վիրաւոր անդամնե-
րն բուն մօր մարմինէն բաժանուելով՝ ուղեցին դարման
գտնել ու երկաթ ապրիլ . սակայն այս սնտոի յոյս զիրենք
օտարութեան մէջ սպառեց : Բայց՝ թող զարմանք չբերէ
ձեզ , որ այսչափ վերքերը կրելէն զկնի՝ ինչպէս դեռ եւս
կենդանի մնացեր է . քանի որ գիտէք՝ թէ Աստուածային
այցելութեան աչքն է որ միայն եղջ պահերէ զանի : Այո՛ ,
դեռ կենդանի է եւ շունչ կ'ընչէ Հայ . բայց , աւանդ , տոյն հա-
մատարած Հայութեան անունը , որ երբեմն հրացուակ աս-
տղի նման յարեւելից յարեւմուտս կ'ցոլանար . ու կ'գո-
վաբանուէր զօրաւոր ազգերէն . միթէ այժմ գաղթական
Հայկազանց մտքէն եւ աչքէն հեռացած է Հայն :

Թող տանք այս եւ սկսենք մեր առարկայն շարունակել .
վերի քանի մի խօսքերով հասկըցուցինք , թէ ով է այդ անկե-
ալ վիրաւորը . կ'մնայ մեզ բացատրել , թէ աբղեօք ով
պիտի լինին Հայկազանց առողջներ : Հայկազանց ամբողջ
մարմնոյն առողջ մնան՝ այն է միայն , որ ազգին ապագայ եր-
ջանկութեան համար յուսով կաշխատեն , նորա են առողջ՝
որ իբրեւ զօրաւոր ու ճարտար բժիշկը , այդ անկեալ վիրա-
ւորին համար դեղ ու դարման կ'մտածեն գիշեր ու ցորեկ :
Անոնք են ահա որ յերկրէ յերկիրը կ'վազեն ու աշխարհէ
աշխարհ կ'քալեն դարման փնտռելու . եւ այն գործաւորտ
Սամարացուն պէս այդ դժբաղդ անկեղծ վերքեր զննելով

պէտք եղած դիւրիչ դարմանները կ'ընեն վերան ու պա-
տելով կ'պատասխարեն :

Օն հապա, Հայկազանց ընտիր առողջներ, միաբանու-
թեամբ սյցելութիւն երնենք անկեալ Հայաստանին, որուն
աչքը սպասելով սպասելով նուաղեցան. ձեռք տանք բըռ-
նենք նորա ցուրտ անդամները ու շօշափենք. թէ արդեօք
դեռ այն հին քաջազանց Հայոց հռանդուն ու տաք ար-
իւն կ'խաղախիւր այժմեան վիճակի մահադուշակ երակներ
ըուն մէջ, ինչպէս որ յառաջ. գուցէ անով զօրանայ մեր
լքեալ սիրտը, նորոգի մեր յոյս, փոքր ինչ մօտենայ Հայ-
կազանց հեռացեալ հին բախդը :

Ո՛հ, սգալի ժամ, ողբոց արժանի այս վերաւորելոյն տե-
սիլ, հազիւ թէ փոքր ինչ կ'խաղան արեան շրջաններն իւր
տկար անդամներուն մէջ. Ուրեմն աճապարենք մէյ մի
ասոր լեզուն բերնէն դուրս հանենք ու մաքրենք այն եր-
կար հիւանդութեան մամուլապատ ախտերէն. գուցէ բե-
րանացի խօսէ, թէ ի՞նչ ժանտ ձեռաց հարուածներու պա-
տահեցաւ ինքն, եւ ի՞նչ կուզէ, հարցանելու եւ տալու չը
զըլանանք. որպէս զի ցաւոց համեմատ դեղեր եւ դարման-
ները պատրաստելու հոգ տարուի : Ո՛հ, ծանրապատում եւ
խորին լուութիւն. . . . սակայն մէյմալ աւելի աչքերուն
դիտենք՝ թէ ո՞ր, եւ ո՞ր մէկ կողմը կ'դարձունէ, գուցէ ա-
նով ի լոյս յայտնուի : Ա՛խ, տեսէք տեսէք, թէ որպէս իւր
սիրուն լուսափայլ աչքերն անթարթ կերպիւ մէկն յա-
րեւմուտն եւ միւսն դէպ ի իրեն՝ տխրադէմ հիւսիս դար-
ձուցեր է. արդեօք ի՞նչ կ'մտածէ կամ ի՞նչ տեսողութիւն
կերեւակայէ, որ այսպէս անթարթ եւ անշարժ դրութեամբ
յափշտակուեր է. ո՛հ, յիրաւի գիտես թէ մեռած է. ձոյն
տանք, թող շնչաբերի. Եփրատին սուրբ ջրով երեսներ Լ-

վանք թող զուարթանայ . եւ կրկին հարցունենք իւր վիճա-
կը, թող ինքնին խօսի իւր ցաւերը : Որ հատկեալ շունչով
կհեծէ ու կկանչէ . « Օգնեցէք ինձ, որդեակք իմ, որդեակք
իմ, օգնեցէք . թեւերուս տակ մտնալով նեցուկ եղիք, որպէս
զի փոքր ինչ դանդաղելով, կարենամ ցաւերս պատմելու :
Արեւմուտ եւ հիւսիս անթարթ նայելուս պատճառ այս է
միայն, որ իմ հայրենի այգիէն լռնաւորաց անգութ ձեռ-
քերով արմատախիլ եղած ուռճազարդ պտղալից ծառերն՝
ընդ հանրապէս այն կողմերն տնկուած են ցիրուցան, որոնց
զովացուցիչ նռներն ու միրգերն յուշ ածելով, ուշակորոյս
կարօտութեամբ կ թալկանամ . ու հիւանդութիւնս միշտ
կկրկնուի . սոյնպէս՝ որ մինչեւ անգամ շատերէն կ կարծուի
թէ պիտի մեռնիմ անշուշտ : Արդարեւ այս կարօտութեան
համար է այս անտանելի վերաց հիւանդութիւնը, այսչափ
երկայնատեւ եղաւ եւ դեռ եւս պիտի տեւէ , եթէ չու-
տեմ այն առողջարար պտուղներէն : Այն, ուր էր այնպիսի
հոգատար կարեկիցները , որ փութով իմ պապակեալ բե-
րանս կաթեցնէր այդ միացեալ հատիկներու նռան զովա-
ցուցիչ ջուրը . որուն համար սրտիս հառաչանքներով կա-
ղաղակեմ . անխ նուռ, վախ նուռ, հայրենեաց պտուղ, դու
իմ կենաց դուռը Թէ եւ ունիմ բարերարներ, բայց
հեռու : Ո՛հ կրտէ այս եւ դարձեալ կ լուէ անշարժ :

Արդեօք այս կարելի էր հիւանդին ըսած ծառերը որոնք
պիտի լինին . ալ հարցանելդ աւելի բան չէ՞ . վասնզի արդէն
յայտնի է, որ այն գաղթական համազգիներն են, որք տա-
րածուած են դէպ իյարեւմուտը եւ հիւսիսը, որոնցմէ մեծ
ընտիր մասն Պօլիս եւ Տփլիս կ բնակին :

Արդեօք ի՞նչ կ կարծէք, ուշիմ ընթերցողք, մի թէ պի-
տի խնայէն յիշեալ գաղթական համազգի որդիք, իւրեանց

արդասեաց առատ պրտուղներէն այս անտերուռնչ վիրաւոր մօրն շնորհք ընելու, որ կարօտամաշ աղքատի մի ման աչկունք դէպ ինոցա ձեռքը. դարձուցած ողորմադին հայր ցռածսով օգնութիւն կ'ենդրէ : Սակայն որոնց ձեռքով տալու են այդ յիշեալ պողոց դեղերը, այդ եւս յայտնի է : Ինոցա ձեռքով պէտք է մատակարարուի, որ հմուտ են բժշկական արհեստին . ո՞վ են այդ հմուտներ, նոքա են՝ որ հիւանդ մօրը բուն հարսգատ զաւակներն են եւ անոր քաղցրահամ կաթէն ծծելով զարդացեր են. այդ հարսգատ սերունդներ ո՞վ են. ճշմարիտ ազգատիրաց կաճաւը, արդարեւ անոնք են՝ վերոյիշեալ հայկազանց առողջները . բայց աւանդ, որ սրբապետ թեան խռովները խոշորւոյն լինելով՝ սրգելք կ'լինին . ատոր ճարձ՝ հարստութիւն եւ միութիւն պէտք է : Ահա տեսար, հիմա դուրս եկաւ հիւանդին խնդրած նուռն, որ բազմադոյն հատերէն մակորերի լով հարք տութիւն ու միութիւն կ'նշանակէ : Ուրեմն պէտք չէ լօքնայել, ո՞վ Հայաստանի մօր գաղթական որդիքը, ժամ մի յառաջ այս դեղերը ու դարմանները պատրաստելով՝ կարօտ հիւանդին հասուցէք :

Արդեօք հարցուցերէք եւ իմացելէք, թէ ո՞վ եղաւ պատճառ, որ զանիւաւազականերուն ձեռք մատնեց. դորա պատճառը զօր ուրիշ որ չէր, բայց միայն խաւար ագիտութիւնը, որ կոյրօրէն առաջնորդելով դարանակալ դողերուն ձեռքը մատնեց զանիւ որոնք յանկարծ վրան թափելով կողոպտեցին ու մերկացուցին իւր հազած իշխանութեան ու փառաց պատմութեանները. Հայկազանց, Արշակունեանց թագերն ալ առ հատարակ կողոպտեցին՝ այս հայրենամուտ դողերը. հայրենամուտ ըսի, վրան գի մտան մեր հայրենիքը եւ դուրս չեւան. Հայաստանի մօր սիրտն ալ մահուան խոցելով վիրաւոր

րեցին եւ զմքն կիսաշունչ թող տալով Ճանապարհին վերայ՝ այսպէս կ'հեծէ աղիողորմ : Այն, կ'հեծէ երկար ժամանակէ ի վեր. ով պիտի լսէ արդեօք իւր հեծեծանքն լուռ ցաւալի միմունջը . թէպէտ միշտ քովէն կանցնեն ու կը դառնան օտար անցաւորները, բայց իրենց համար հոգ չէ. վասն զի Հայու միմունջը նոցա ականջին օտար եւ ան ընտանի է : Ուրեմն բուն իւր հարազատ զաւակները պէտքէ լսեն. սակայն լոկ լսելով կամ գրելով հեռուանց այս հիւանդը բժշկութիւն չի գտներ. հապա պէտքէ՝ ոտքով ու մերձաւոր կարեկցութեամբ երթանք եւ այս վիրաւորեալ Մօր մահճին մօտ նստենք. լեզուով սփոփենք ու ձեռքով զարման մատուցանենք :

Գիտէք, Հայկազանց առողջները, այս մեծ այցելու թեան պաշտօն ձերն է, դուք միայն այս անկար անկելոյն համար գթասիրտ Սամարացի պիտի հանդիսանայք հայրենեաց Ճանապարհին վերայ, ուր ընկած է ձեր դժբախդ մայրիկ : Նախ եւ առաջ լաւ մի զննելով գիտնալու է, թէ արդեօք այս հիւանդին գլխաւոր ու մահառիթ վէրք իւր անձին որ մասին վերայ են : Տարակոյս պէտք չէ ասոր. մեր նախնի խմստուն ու ճարտար բժիշկները այս ցաւապար անձին համար մեծ գիտողութիւն ըրած են ու գրով ալ ւսանդեր են մեզ, որ այդ հիւանդին գլխաւոր մահառիթ վէրքը սրտին ու մտքին վերայ է. վասն զի Գորա սիրտը իսկը բանէ անտի խոր վէրքերով լեցուցերէ, Կուր ինքնահաւան ամբարտաւանութեան, սուր նախանձու եւ ատելու թեան, սուր երկպառակիջ անմիաբանութեան. իսկ Գորա առողջ միտքը վիրաւորեց սաստիկ տգիտութեան ժանգուտած սուրը :

Եթէ այսպէս, ուրեմն Հայկազանց ընտիր բժիշկները,

դեղարան պէտքէ կազմել հիւանդ Հայաստանի դրան
մօտ. ինչ արդեօք, դպրոց դպրոց, ուսողմն ուսողմն, եւ այս
դեղարանին մէջ բաւական է երկու գլխաւոր նիւթերէն մի-
այն դեղ կազմել, իրար խառնելով՝ այսինքն վերքեր բժշկե-
լու համար բարոյական դաստիարակութիւն. իսկ մասց՝
ուսումն եւ լուսաւորութիւն :

Ահա այս դեղերով միայն կառողջանայ մեր սիրելի մայր
Հայաստանը. սրտի վերքերուն համար բարոյականութեան
պատան պէտքէ. իսկ լուսաւորութեան՝ ձէթ :

Համադանս Գեորգ. Մ. Դաւիթեան.
Մամիկոնեանց. Ա. Ժ. Վ. Վարդայ :

Բ. Ե. Թ. Լ. Ե. Հ. Ե. Մ. Ի. Վ. Ա. Ր. Դ.

ԳԻՇԵՐ իւր սեւ վարագոյր

Պարզեց սփռեց դաշտ ու ձոր,

Պատեց թանձր մէկ խաւար,

Վեր աշխարհիս հաւասար :

Բնութիւն զգեցաւ լուսութիւն

Դադրաւ ծառոց շրջնիւն,

Իջաւ քամին հովն սառտիկ

Անտառներու սօսաւին :

Բարձրը սարի ծայրերից

Թուխ Թուխ ամպեր փախ առին.

Ուրիանոս ծաւալուն

Աչեր խփեց մտաւ քուն :

Մեղոյշ լուսնակ դեղնահեր

Պարզեց ցօղուտ ճաճանչներ :

Յորդանանու ափերուն

Տուաւ համբոյր եւ ողջոյն :

Ըն տեաքան նորահրաշ

Կու նշմարուի հեռունաց :

Զինչ է այն լոյս շափիկայ

Յերկնից կախուիլ քանց շղթայ :

Բեթլէհէմի վէր այրին

Իջեր հեզիկ եւ լրոին :

Կունով կանաչ կարմրիկ

Սամար կապեր խորտակ :

Մուգայ, քնարիդ թել սագէ :

Փափուկ մատով բաբախէ :

Մանուկ Աստուած էն տեղն է :

Գողտրիկ տաղեր յօրինէ :

Բեթլէհէմին բուրաստան

Վարդ մի բացուեր բոցանաւ :

Անփուշ, ամբիծ թուփ Կուսին,

Մանուկ բուրէ հոտն անմահ :

Երկնից փոխան, մտն ր այր

Բաբէ, բազմեր է խոնարհ :

Տիեզերաց Տէր իշխան

Իբրեւ աղքատ եւ անանկ :

Սրովբէական գահին տեղը

Բազմոց ունի չոր յարդերը :

Ընդ լայն անբաւ երկնից ծիր

Մտեր է նեղ խանձարիր :

Սուսին քաղցրիկ ստեանց կաթ
Ճծէր մանկիկ խանդակաթ .

Մարմին քան զձիւն սպիտակ
Փայլէր լուսով զինչ հրեշտակ :

Լոյսն ըզնովաւ ծիրանի
Պարածածուկ առել փակ .

Խաժիկ աչկունք փալփլայ,
Նման աստղին, որ ցոլայ :

Ճապուկ ձեռք, ախ, իսէր
Մօրը վրզին փարում էր :

Իբրու տըղայ մեղապարտ
Սուլար սրբիչն արտասուայ :

Սայլակ կայլակ արցունքով
Թանայր ծնօտն իւր բոսոր .

Սոյսը լուսին տայր համբոյր,
Շուշանագեղ շրթունքով :

Աչկունքն ինա միշտ պշնոյր,
Երգէր օրօր քաղցր անուշ .

Որ անքունն էր, զգաստ, զգոյշ,
Ննջէր իբրու մարդ անյուն :

Մանուկ մատաղ, ած մատունքդ
Ի ծակ իժին որ մօտ է,

Բռնէ ծմլէ բուռն ուժով
Թող սատակի թշնամիդ :

Մարդ իւր պատիւ չի ծանչցաւ
Եղաւ հողւոյն հաւասար .

Դու անասնոց մինչ ի մտեր
Իջեր նմին այցելու :

Խոնարհեցար քո գահէն
Մինչ Բեթլէհէմ յայր անշէն .
Մարդոյն մեղօք խոնարհեալ
Որ կանգնեցես վեր դարձեալ :
Սիրեմ զքեզ, Մանուկ Յիսուս,
Սիրեմ զգահ քո մտուր .
Այն մոգերուն հետ տամ ընծայ
ամբիծ հաւատ ու սէր Սուրբ :

Արամ Բժիշկեան . Մ. ակերտ
Ժ. Վ. Վ. ագայ :

Բ Ա Ժ Ա Վ Ն Ե Ր Ս Ի Ս Ի

ՄԻՆՉԴԵՈՒ Լուսարեր իւր թեւեր նախշուն
Լերանց կատարէն պարզից զսշտերում,
Թռչունք օղահերձ քնէն զարթնելիս
Ի ծռուղէին ծառոց ձիւղերում :

ՊԼպուլ իւր վարդին վերայ էր երգում
Գաղցր առաւօտեան գալուստ ողջունում .
Այն, ապառաժ սիրտ էն Պապ Թագաւոր
Խորովի կ պատրաստէր, աղուէս նենգաւոր :

ՄԵՆԻ Ի յընթրիս Հայրապետ Ներսէս
Հատանել արեւ Հայոց աշխարհէս .
Հրաման է տալիս իրան ծառայից,
Հազնել պատմութեան ու զրահք զարդից .
Կառք մի պատրաստել աշխուժ ձիերով,
Երթալ Ներսիսի հրաւիրակ պատուով :

Երթում են ծառէք հրամանակատար
Մտրակեն կիջնեն Ներսէսի պալատ :

Ահա քեզ համար, Տէր սրբազան Հայր,
Ընթրիս էկազմել մեր Թագաւոր Պապ.
Դիմի բարու թիւններ պատրաստել տուեր
Բոլոր բազմականք քեզ են ըսպասել :

Երբոր հասնում են արքունեաց մօտով,
Ներսի բազմականք դալիս են կարգով.
Դիմի էլ անմեղ են, մինն է նենգաւոր
Յուդայի նման տալիս է համբոյր :

Ո՛հ, տէր իմ դու վեհ՝ Հայաստանի յոյս,
Այսպատայ տան Արեգակն եւ յոյս,
Ամէն պատուէրներ որ տուիր ինձի,
Դիմի կատարեցի սղ բան չթողի :

Օրհնէ, հայր Ներսէս, օրհնէ իմ արեւս
Ես քեզ ծառայ եմ, վկայ է պատկերս.
Հրամէ եւ նստիր վերայ իմ գահիս
Այսօր իմ պարգեւս՝ այս քեզ լինելիս :

Ամէն կերպերով անմեղ ձեւանում
Պապ սրտի միջին շատ ուրախանում.
Իսկ Ներսէս կ'հայէր ընդ կերպ աղուէտուն
Նրա կեղծուածք բոլոր նկատում :

Եւ ահա սեզան պատրաստել տալիս
Բաժակներ լեցուած վերէն շարելիս.
Պապ կ'ծառայէր դօտի ամելով
Թուերն էր չլտած ձեռքէն մինչ ի վրդ :

Դեռ սուրբ էր գինին, դեռ չէր թոյն խառնած
Հաւ մի լեցուցին խմեց անկասկած
Եւ ահա խարդախ եկաւ մօտեցաւ

Բաժակ մը լըցրուց մահու թիւնախառն ։

Ներսէս ձեռքն առաւ էն խարդախ բաժակ
խմելիս իմացաւ թէ մահ ճաշակեաց ։

Իւր աչքեր դարցրուց վեր էն բաժակին
Սրտառու չ իօսեց այս բան ցաւագին ։

Ա՛խ, բաժակ բաժակ, քեզ եմ ասելիս
Ի՞նչպէս խմեմ քեզ, նման Յիսուսին ։

Նոր անոյշ էիր, դառն արդ երեւիս
Ո՛վ արեց քամեց այդ պիղծ խառնելիս ։

Նայեցայ տեղումդ սեւ երեւնալիս
Հայեցայ համիդ դառն էր փոխելիս ։

Նշայ գինիին չէր էդ քո տեսակ
Ինձ արբեցրուց այնպէս՝ որ անդարձ ։

Ա՛յս էր փոխարէն, Պապ, իմ երախտեսց
Որ դ լսոյդ բերի ես թագ ու պսակ ։

Ա՛յս էր փոխադարձ, այս եղաւ բաժին
Այնչափ վաստակոց ու քրտանց ջանից ։

Էս երբ ասելիս դառն ու ցաւագին,
Եղաւ դուռնէն դուրս գնաց իր հանդիստ ։

Դիմի բաղմականներ նրա ետեւէն

Միջին էր նսեւ քաջասիրտ Մուշեղ ։

Քանի կերթար ժամ, կ'նուաղէր Ներսէս ։

Գունդագունդ արիւն կը հոսէր բերնէն ։

Բերան՝ որ Հայոց թիւր բաներ կուղղէր ։

Ապաշտորհ Պապին միշտ խրատ կուէր ։

Ա՛խ, էն թեւերում ուժ չէր մնացել ։

Որ Նպատ սարում իւր ձեռք տարածել ։

Հայոց ամպ կուզէր ու Պարսից արեւ ։

Մինչ յաղթեց Մուշեղ Մեհրուժանին թեւը ։

Ո՛հ, էն սուրբ գլուխ ի հողին դրնում
նր շայաստանի բարիքն էր խորհում .

Խփեց այն դիտող աչիւնք լուսալառ,
Մթնեցաւ երկիր ու շայոց տաճար :

Շայաստան տխրեց, պատեց խոր գիշեր
Ներսէս իւր հոգին առ Աստուած փոխեց .

Մասին սարէն կուգար արձագանք,
Ջերթ մանուկ կուլար Ներսէսի մահուամբ :

Դու կայ, Շայաստան, բայց Ներսէս գնաց,
Յիշէ իմ անունս, պահէ անսնուց .

Վասն քո Ներսէս խմեց այն բաժակը,

Ապերախտ Պապին, ո՛հ, չար յիշատակ :

Հրաչեայ Մ. Առաքել

Ժ. Վ. Չարադայ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃՔ

Մեծատան կեանքը այն ծովուն կ'նմանի, ուսկից փռ-
թորիկ պահաւ չէ :

Ով որ շատ գանձեր դիզած ունի, անիկայ բնաւ
հանդիստ չունի :

Սիրէ այն բարեկամ, յորմէ կ'կարծես մինչեւ ցմահ
քեզի պիտի սիրէ :

Երջանիկ է այն հայրը, որոյ տղան դիտութեան ետեւէն
կերթայ :

Մարդ թէ որ միշտ ուրախութեան մէջ լինի, Աստու-
ծոյ բարիք մատահան կ'է :

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ

ԴՈՐԾԱԿԱԼԻ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ .

ՊԱՆ . Պ . Մկրտիչ Տ . Ատոմեան :

ԲԱՂԷՇ . Պ . Տիգրան Կալփաղ չեան, Պօլսեցի .

ԲԵՐԻԱ . Յովհաննէս Բաբայր թիտան լեանց :

ՄՈՒՇ . Աղա Վարդան Մամիկոնեան :

ՍԱՐԷՆ . Խաչատուր Խան Տ . Երսիսեանց :

ՏՐԱՊԷԶՈՆ . Պ . Ստեփան Մ . Յակոբեանց :

ՊՕԼԻՍ . Ղեւնդ Վարդապետ միաբան Արազայ :

ՏՓԽՍ . Պ . Համարձուժ Էնֆիաճեանց հրատարակիչ Ալ-
առնի Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն . Էւ Պ .
Գարեգին Մուրատեանց :

ԴԱՆՁԱԿ . Պ . Երպէս Արահամեանի :

ՂԱՐԱԲԱՂ . Ընթերցատիրաց Թանգարան :

ԱՂԵԲՍԱՆԴՐՊՕԼ . Որմէն Սարկաւադ Օրէնսուսոյ
Սպարոնի ուսումնարանին :

ՆՈՐ ՊԱՅԱԶԻՏ . Աղա Բարսեղ Արծրունեաց :

ԵՐԵՒԱՆ . Պ . Զաքար Տ . Յովհաննէսեան :

ՆԱԻԶՈՒԱՆ . Մ . Մկրտիչ Թուեան :

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ . Պ . Գապար Աշտնեանց :

ՆԵՐՔԻՆ . — Ուսումնասէր Տ . Յակոբ Բահանայ Տ .
Անդրեասեանց :

ԴԱԻՐԷԺ . Մատթէոս Նաղարեանց Էւ Յովհաննէս Շխեանց
Արարադցի վաճառական ուսումնասէր Պարոնայք :

ՍԱԼԱՄԱՍՏ . Աղա Պապուշ Ալիովանեան :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՅ

Ազգային կտորնական վարչութիւն 129

Զոգր Երեմիայի վերածնալ ի Հայաստան 113

Աղիւս թիւն Հայկազանց ըստ Հայրենիս 116

Բեթլէհէմի վարդ 154

Բաժակ Արթուրի 157

Ասածք 160

ԴԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒԿ

Ի վառ, 'ի Բաշէշ, 'ի Մաշէշ, 'ի Արշէշ, երբ որ ի Երեմիայի բառ շոբաշէշ արձար Մեծիւրի:

Իսկ զիս եւ Տաճարապետի աւրիշ խաշաշէշէր երես արձար բառ շոբաշէշ Մեծիւրի:

Ի Ռաբաթապետ եւ 'ի զարաթապետ շոբաշէշ Մաշէշ:

Ճանապարհին ի Երեմիայի գիրքին ի Երեմիայի: